

ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ ԱՆՁՅԱԼԻ ԵՎ ՆԵՐԿԱՅԻ  
ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ

ՀՏԴ 37.02

DOI: 10.56246/18294480-2023.15-40

**ՊԱՊԻԿՅԱՆ ԿԱՐԻՆԵ**

Գավառի պետական համալսարանի և

ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ-ի դասախու,

մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ

Էլիոսսպ՝ karineparikyan61@mail.ru

**ԴԻՇԱՂԱԶՅԱՆ ՆՈՒՆԵ**

Երևանի Ռ. Իշխանյանի անվան թիվ 153 հիմնական դպրոցի

հայոց լեզվի և գրականության ուսուցուիչի

Էլիոսսպ՝ Nune Decshagagyan@gmail.com

**Ժամանակակից հանրակրթական դպրոցում նախագծային գործունեությունը սովորողների գործունեության արդյունավետ բեսակներից է:** Ուսումնական նախագծերը նպաստավոր պայմաններ են սպեհծում սեփական հնարավորությունները ճանաչելու և զարգացնելու համար, դրանք ձեռք բերած գիտական գիտելիքները վերածում են գործողությունների: Նախագծային ուսումնառությունը սովորողի ինքնուրույն, որոնողական աշխատանքի բաղադրիչ է եղել բոլոր ժամանակներում, սակայն ներկայումս դրան ավելի հսկակ ու կոնկրետ պահանջներ են ներկայացվում: Նախագծային ուսուցումը ներդրվել է դեռևս 18-րդ դարում Եվրոպայի ճարրարապետության դպրոցներում: 20-րդ դարի առաջին կեսին նախագծերի մեթոդը կիրառել է ամերիկացի մանկավարժ, փիլիսոփա, հոգեբան Ջ. Դյուի: Հետագայում նախագծային մեթոդը կիրառել ու զարգացրել են Ջ. Դյուիի աշակերդ Ուիյամ Հերտ Կիլպատրիկը, Թոմաս Մարքեմը, Ա. Պ. Պինկ-Ահըր, պրոֆեսոր Եվ. Ս. Պոլավը և բազմաթիվ մանկավարժներ:

Նախագծային ուսուցումը՝ որպես ուսուցման կազմակերպման ձև և ուսումնառության ակնկալվող վերջնարդյունք, ամրագրված է 2021 թվականին ՀՀ կառավարության կողմից հաստավված «Հանրակրթության պետական չափորոշչի» իրավական փաստաթղթում: Ըստ «Հանրակրթության պետական չափորոշչի»՝ նախագծային աշխատանք սահմանվում է հանրակրթության ուսումնական պլանի պետական և դպրոցական բաղադրիչներով: Այսինքն՝ նախագծային աշխատանքներ կարելի է իրականացնել թե՝ պետական բաղադրիչի (ուսումնական առարկաների), թե՝ դպրոցական բաղադրիչի (խմբակների) դիրույթում: Նախագծային ուսուցումն արդյունավետ է, եթե կիրառվում է ոչ թե առարկայական ավանդական դասավանդման փոխարեն, այլ դրա հետ մեկտեղված՝ որպես կրթական համակարգի կառուցարար:

**Բանալի բառեր՝** նախագծային ուսուցում, հանրակրթություն, կոմակերտենցիա, գիտելիք, գործողություն, ինքնուրույն աշխատանք, հետազոտական աշխատանք, չափորոշիչ, մեթոդ, տեխնոլոգիա, հիմնախնդիր, պլանավորում, արդյունք, պեկան բաղադրիչ, դպրոցական բաղադրիչ, մասնագիտական կողմնորոշում:

Կրթության համակարգում կատարվող փոփոխություններն անխուաս-փելիորեն ներառել են նաև հանրակրթությունը: Հանրակրթության բարեփոխումների ընդհանուր ուղղվածությունը և տրամաբանությունը, ենելով կոմ-պետենցիաների վրա հիմնված մոտեցումից, միտված են խթանելու սովորողների ինքնուրույնությունը և ստեղծարար նախաձեռնությունը, ծևավլորե-լու և զարգացնելու հետազոտական-որոնողական աշխատանքի ուսումնա-կան հմտություններ: Այս իմաստով նշանակալի է հատկապես նախագծային ուսուցման՝ որպես ուսումնական գործունեության տեսակի չափորոշչային ամրագրումը և ներառումը կրթության համակարգ:

Հանրակրթական դպրոցը հիմնականում հեռու է իրական կյանքից, և այն ամենը, ինչ կատարվում է դպրոցում, հաճախ կապ չունի իրական կյան-քի հետ: Եթե դպրոցի դրույթը բացենք իրական աշխարհի առջև, եթե իրա-կան կյանքի հիմնախնդիրների լուծման ուղիները սովորողները որոնեն հենց դպրոցում դասավանդվող ուսումնական առարկաներից ձեռք բերված գիտելիքների, դրանք կիրառելու միջոցով, և եթե սովորողներն իրենք նկա-տեն, բացահայտեն այդ հիմնախնդիրները, ապա նրանց մեջ կծևավորվի ինքնուրույնություն, նախաձեռնողականություն, ստեղծարարություն, հիմ-նախնդիրները բացահայտելու, դրանք ինքնուրույնաբար լուծելու կարողու-թյուն: Նախագծային ուսուցման նպատակը վերոնշյալ որակների ծևավ-րումն է, որը ժամանակի հրամայամանն է և կարևորվում է ժամանակակից հանրակրթական դպրոցում: Դա նաև նախագծային ուսուցման հենակետն է, բովանդակությունն ու իմաստը:

Չնայած կրթական այս կարևոր դերին ու նշանակությանը՝ նախագիծը մեր կրթական համակարգում դեռևս լիովին և արդյունավետ չի կիրառվում, հաճախ էլ մնում է միայն առանձին ուսուցիչների ինքնուրույն նախաձեռնու-թյան տիրույթում: Ոչ ամբողջական և ոչ լիարժեք պատկերացումների բա-ցակայության պատճառով այն երբեմն շփոթվում կամ նույնացվում է ուսում-նական այլ գործընթացների հետ:

Միանշանակ և որոշակիացված չէ նաև «նախագիծ» մանկավարժական հասկացության սահմանումը. ոմանք այն համարում են համակարգ, մյուսնե-րը՝ տեխնոլոգիա, ոմանք էլ՝ մեթոդ: Նախագիծն ուսումնական գործունեու-

թյան եղանակ է, որի ընթացքում սովորողի բնատուր ընդունակությունները համակցվում և համատեղվում են ուսումնառության ընթացքում տարբեր ուսումնական առարկաներից ձեռք բերված տեսական և գործնական գիտելիքներին, և ուսումնառության ընթացքում ձեռք բերված նոր գիտելիքն ու փորձը կիրառում են պրակտիկ գործողությունների մեջ՝ իրագործելու համար որևէ գործնական խնդիր կամ գաղափար:

«Նախագիծ» հակացությունն իմաստային լայն ընդգրկում ունի: Նախագծերի վրա հիմնված ուսուցումը արդիական հիմնախնդիրների լուծմանն ուղղված ստեղծագործական աշխատանք է, որի նպատակները որոշում են սովորողները և դրան հասնում են իրենց համար նոր տեղեկատվության հնքնություն ձեռքբերման, կիրառման ու յուրացման գործընթացում: Արդյունքում ստացվում է իրական արդյունք: Մանկավարժական տեսանկյունից այն տեսական և գործնական աշխատանքի կատարման մեկտեղված ձեռնարկում է՝ համապատասխան սովորողի հետաքրքրություններին և տարիքային հնարավորություններին այնպես, որ նա կարողանա նախագծի ղեկավարի, ուսուցչի մասնակի օգնությամբ ինքնուրույն ճշտել և ներկայացնել նախագծի նպատակը, նպատակի իրագործման քայլերը, գիտակցել, փաստարկել և հիմնավորել դրանց կարևորությունը և նշանակությունը, գործնական կիրառելիության հնարավոր ձևերը և, ի վերջո, իրագործվի այդ ամենը, ստանա արդյունք և ներկայացնի այն:

«Նախագիծ» եզրույթը նորածնոթ չէ, այն ներդրվել է դեռևս 18-րդ դարում Եվրոպայի ճարտարապետության դպրոցներում, իսկ 20-րդ դարի առաջին կեսին, որպես մանկավարժական մեթոդ, կիրառել է ամերիկացի մանկավարժ, փիլիսոփա, հոգեբան Ջ. Դյուին, ում մշակած նախագծերի մեթոդի գաղափարը «սովորել անելովն» է: Նա գրում է՝ «Կրթությունը կյանքի համար նախապատրաստություն չէ. Կրթությունն ինքնին կյանքն է: Ուսուցման ժամանակ շեշտը պետք է դնել իրական խնդիրների վրա»<sup>1</sup>:

Ջ. Դյուիի աշակերտ Ուիլյամ Հերո Կիլպատրիկը նախագծի մեթոդը ներկայացրեց իրեն ուսուցչի պրոբլեմային ուսուցման բաղադրիչ, իսկ Թոմաս Մարքեմը նախագծային ուսուցումը համարեց տեխնոլոգիա, որի իրագործման ընթացքում համատեղվում են իմանալն ու անելը<sup>2</sup>:

<sup>1</sup> Իմաստունների մտքերը գիտելիքի, դաստիարակության, կրթության և մշակույթի մասին <https://thestrip.ru/hy/lipstick/umnye-slova-ob-obuchenii-mysli-mudryh-o-znaniyah-vospitanii-obrazovanii-i/>:

<sup>2</sup> Կիլպատրիկ Բ., Основы метода., М.-Л., 1928.

Ուսաստանում նախագծային ուսումնառությունը կիրառվել է 1905թ.<sup>3</sup> Իոկտեմբերյան հեղափոխությունից հետո, սակայն լայն կիրառություն չի ստացել, քննադատվել և ընդհատվել է մինչ 20-րդ դարի 80-ական թվականները: Հայտնի խորհրդային ուսուցիչ Ա.Դ. Պինկաշյանը գրել է. «...մեր խնդիրն է նախագծային համակարգից վերցնել ամեն դրական բան՝ որպես ուսուցման կազմակերպման համակարգ՝ նոր բովանդակություն դնելով դրա մեջ: Սոցիալապես օգտակար աշխատանքի բոլոր տեսակները, ըստ Էռլայան, տարբեր «նախագծեր» են: Նախագծային համակարգը դրել է չափազանց կարևոր խնդիր՝ մեր դպրոցներում կրթությունը կառուցել երեխաների սեփական պլանավորման հիման վրա, ինչպես նաև կյանքի հիմքերը լաբորատորիայում ուսումնասիրելու փոխարեն ուսումնասիրելու խնդիր»<sup>3</sup>:

Պրոֆեսոր Ե. Ս. Պոլատը նախագիծը համարում էր «խնդիրի մանրամասն մշակման միջոցով դիդակտիկ նպատակին հասնելու մեթոդ, որը պետք է ավարտվի միանգամայն իրական, շոշափելի գործնական արդյունքով՝ ձևակերպված այս կամ այն ձևով: Այն սովորողների որոշակի գործողությունների հաջորդականությունների, հնարների համադրություն է, որոնք իրականացվում են տրված առաջադրանքը կատարելու նպատակով՝ յուրաքանչյուր սովորողի համար էական և որոշակի վերջնական արդյունքի տեսքով»<sup>4</sup>:

Նախագծային ուսուցումը՝ որպես ուսուցման կազմակերպման ձև և ուսումնառության ակնկալվող վերջնարդյունք, ամրագրված է 2021 թվականին << կառավարության կողմից հաստատված «Հանրակրթության պետական չափորոշիչ» իրավական փաստաթղթում: Սովորողը պետք է

դրսնորի հետազոտելու, փորձարկելու, տարբեր գործիքակազմեր համադրելու կարողություն, ոլորժների հետ համատեղ կամ ինքնուրույն մշակի և իրականացնի նախագծեր. (<-28 վերջնարդյունք),

ոլորժների հետ համագործակցելով և ինքնուրույն մշակի և իրականացնի նախագծեր՝ ձեռք բերած գիտելիքը կամ գործնական արդյունքը ներկայացնելով տարբեր միջոցներով (Մ-29 վերջնարդյունք):

<sup>3</sup> Пинкевич А. П., Педагогика, М., 1929, т. 2., Էջ. 264

<sup>4</sup> Полат Е. С., Бухаркина М. Ю., Современные педагогические и информационные технологии в системе образования, Учебное пособие, М., Издательский центр «Академия», 2007.

<sup>5</sup>Հանրակրթության պետական չափորոշիչ

<https://www.arlis.am/documentview.aspx?docid=149788>:

Այսպես շեշտադրվում և պետականորեն կարևորվում է հանրահայտ իրողությունը. սովորողների գիտելիքները հիմնավոր և օգտակար են այնքանով, որքանով դրանք կիրառելի և գործածելի են:

Նախագծային ուսումնառության կարևորության և նշանակության առումով նշանակալի է և այն, որ ըստ «Հանրակրթության պետական չափորոշչի» նախագծային աշխատանք սահմանվում է հանրակրթության ուսումնական պլանի պետական և դպրոցական բաղադրիչներով: Այսինքն՝ նախագծային աշխատանքներ կարելի է հրականացնել թե՛ պետական բաղադրիչի (ուսումնական առարկաների), թե՛ դպրոցական բաղադրիչի (խմբակների) տիրուպթում<sup>6</sup>:

Նախագծային ուսուցումը արդյունավետորեն կարող է լուծել հանրակրթության նոր չափորոշչով սահմանված կրթության մի շարք հիմնախնդիրներ՝

անձի բացահայտում և զարգացում,

անձի մասնագիտական ինքնորոշում և հետագա ուղղություն,

սովորողների հիմնարար գիտելիքների և կարողությունների կիրառում, որոնք ձեռք են բերվում անձնական, ընտանեկան և սոցիալական տարրեր հիմնախնդիրների լուծման ճանապարհին,

ինքնուրույն ճանաչողական գործունեության խթանում, երբ սովորողները հետաքրքրված են առաջադրված հիմնախնդիրի լուծման ուղիներ փնտրելու, նոր տեղեկույթ ձեռք բերելու և գործունեության նոր եղանակներ յուրացնելու գործում,

բարդ թեմաների ուսումնասիրում տարրեր գիտությունների դիտանկյուններից, որով վերացվում են ուսումնական առարկաների միջև եղած պատնեշ-սահմանները, և սովորողներին պարզ են դառնում երևույթների ու գործընթացների միջև գոյություն ունեցող կապերն ու կապակցությունները՝ կրթության գործընթացն ավելի մոտեցնելով հրական լյանքին,

սոցիալական կարևոր ու նշանակալի հիմնախնդիրների լուծմանը սովորողներին մասնակից դարձնելը, որն էլ իր հերթին ձևավորում է մասնագիտական տարրեր հետաքրքրություններ, սոցիալական կարողունակություններ և անձնային բազմաթիվ որակներ:

<sup>6</sup> «ՀԳՄՍ, խմբակներ և նախագծային ուսուցում. Ուժի մեջ է մտել նոր կարգը. <https://escs.am/am/news/11707>:

Ի վերջո, Նախագծային գործունեությունը սովորողի ձեռք բերած գիտական գիտելիքները վերածում է գործողության: Նախագիծն ուսումնական աշխատանքի այնպիսի ծև է, որի կատարման ընթացքում զարգանում են սովորողի ոչ միայն գործնական կարողություններն ու հմտությունները, այլև ընդլայնվում և հարստանում է նրա իմացական ու ճանաչողական դաշտը: Նախագծերի մեթոդը ենթադրում է գաղափարի կամ խնդրի առաջադրում, դրանց լուծման և իրագործման ծրագրում: Հարցը, սակայն, խնդրի կամ գաղափարի սոսկական առաջադրումը չէ, այլ դրանց լուծմանն ուղղված տեսական և գործնական աշխատանքների ծրագրումը և կատարելիք քայլերի, գործողությունների պլանավորումն ու իրագործումը: Նախագծային աշխատանք կատարող սովորողը նախ պետք է հասկանա, թե ինչ խնդրի է լուծում, ըմբռնի և գիտակցի այն, կարողանա ինքնուրույնաբար ծևակերպել և համոզիչ ու փաստարկված ներկայացնել խնդրի բովանդակությունը, էռությունը և ապա իրագործման ընթացակարգը:

Անհրաժեշտ տեղեկույթի փնտրությունը, այդ ընթացքում առաջացած մտքերի գրառումները, դրանց հետազոտումը և քննական վերլուծությունը դառնում են նոր գիտելիքների ձեռքբերման, ճանաչողական և իմացական բացահայտումների չպարտադրված պայման և հնարավորություն: Սովորողն ինքնարերաբար ձեռք է բերում և՝ տեսական, և՝ գործնական գիտելիքներ, հմտանում դրանց իրագործման փորձառության մեջ: Օգտագործելով սեփական կարողությունները՝ նա ձեռք է բերում խմբով կամ ինքնուրույն ինչ-որ բան ստեղծելու, ինքնադրսնորվելու, ինքնարտահայտվելու, սեփական ուժերը փորձելու, ձեռք բերած արդյունքը ցուցադրելու հնարավորություն:

Նախագծային աշխատանքի կատարման ընթացքում սովորողներն աստիճանաբար դառնում են նախաձեռնող, ծևավորվում և զարգանում են նրանց՝ տեսական և գործնական գիտելիքների կիրառման հմտությունները, ստեղծարար որակները, ուսումնառական կենսափորձը. գաղափարական մտագործունեական ընկալումները վերածվում են ճանաչողական ընթացքը պլանավորող, ծրագրող և կարգավորող գիտակցական գործողությունների: Արտաքին արդյունքը կարելի է տեսնել, ընկալել, կիրառել իրական պրակտիկայում. ներքին արդյունքը՝ գործունեության փորձը, դառնում է ուանողի սեփականությունը՝ վերածվելով կարողություն-հմտության և ամրապնդվելով արժեքների ծևավորման ու զարգացման գործընթացում: Նախագծային աշ-

իատանքը համակողմանի ու ներդաշնակ զարգացած ու մրցունակ անհատի ինքնախրացումն ու սոցիալականացումն է<sup>7</sup>:

Նախագիծ ստեղծելու, այսինքն՝ առաջադիր խնդրի լուծման ընթացակարգ ունենալու համար նախ պետք է մշակել այդ ընթացակարգը, որը սովորաբար ներառում է 3 փուլ՝

ա/ տեսական շարադրանք՝ աշխատանքի կատարման ընթացքի, կարևորության, նպատակի և խնդիրների մասին,

բ/ նախագծի բուն գործընթացի իրականացում,

գ/ կատարված աշխատանքի ներկայացում, վերլուծություն-գնահատում:

Յուրաքանչյուր փուլի համար նախանշվում են որոշակի քայլեր: Քայլերը ծրագրվում և պլանավորվում են ըստ նպատակահարմար առաջնահերթության (այս կամ այն կազմակերպական խնդիրների մասին սովորողներին ուղղորդմամբ տեղեկացնում է նախագծի դեկավարը կամ ուսուցիչը):

1-ին փուլում ընտրվում, ձևակերպվում և սահմանվում է նախագիծը (թեմա, հիմնախնդիր), պարզաբանվում և հստակեցվում են նախագծի նպատակը, կարևորությունը, նշանակությունը: Այս փուլում ուսուցիչ միջամտությունը համեմատաբար ավելին է, քան 2-րդ և 3-րդ փուլերում:

2-րդ փուլում կատարվում է նախագծին առնչվող տեղեկույթի հայթաթում, հավաքում և համակարգում, այնուհետև համակարգված տեղեկույթը մշակվում, հետազոտվում և համադրվում է նախագծողի նկատառումներին և բացահայտումներին:

Սրան հաջորդում է չափելի ընկալելի գործողությունների ծրագրումը և նախանշումը, նաև այն, թե ինչպես, ինչ տեխնոլոգիաներով, մոտեցումներով, մեթոդներով և գործիքակազմով պետք է իրագործվեն դրանք: Համոզեցուիչ և հավաստի փաստարկումներով ներկայացվում են նաև այն միջոցները և ռեսուրսները, որոնք պետք է ներդրվեն նախագծի իրագործման համար: Այս ամենը կատարվում է թվային մեղիայի, գրառումների, այլուսակների ու գծապատկերների, ուրվագծերի, պատկերազարդ պաստառների, նաև այլ գործիքակազմերի կիրառման միջոցով: 2-րդ փուլը նաև նախագծի գործընթացի իրագործման փուլն է, երբ տեսականորեն ծրագրված միտքը ու գաղափարը ոգի ու շունչ են առնում որպես կատարված և իրագործված քայլերի ու գործողությունների իրական և շոշափելի, պիտանի և կյանքում օգտագործելի արդյունք: Այս փուլում ուսուցչի կամ նախագծի ղե-

<sup>7</sup> Briller V., Technology projects, 2021

Կավարի խնդիրն է առանց թելադրանքի հետևել նախագծի կատարման ընթացքին, խրախուսելով սովորողների ստեղծագործ մոտեցումները՝ նրբանկատ հուշումներով բացահայտել ու պարզաբանել կատարվող աշխատանքների կարգապահական որակները և արդյունքները:

3-րդ փուլը նախագծի ընթացքի վերլուծության և արդյունքի ներկայացման փուլն է, որ կարող է կատարվել շնորհանդեսի, պաշտպանության, ելութի, բանավոր հաղորդման կամ գեկուցի, գրքի, փորձանմուշի ներկայացման, գիտաժողովի, սեմինարի, կլոր սեղանի, ֆունչարքի, հոդվածի, ուսումնական էլեկտրոնային փաթեթի և այլ ձևերով:

Կախված նպատակային ուղղվածությունից և բովանդակությունից՝ նախագծերը կարող են լինել տարաբնույթ և դասակարգվել հետևյալ տեսակների՝ կրթական, սոցիալական, տեղեկատվական, անհատական, դիզայնի, ճարտարագիտության և այլն: Իսկ ըստ աշխատանքային գործունեության կազմակերպման ձևի՝ կարող են լինել անհատական, խմբային, տեղական և հեռահաղորդակցական:

Այսօր նախագծեր ստեղծվում են հասարակական կյանքի տարբեր ոլորտներում, երբ անհրաժեշտ է լինում ստանալ որոշակի արդյունք, արտադրանք (նյութական կամ ոչ նյութական)՝ պլանավորված և նպատակային աշխատանքի միջոցով:

Մանկավարժագիտական ոլորտում նախագիծը հիմնականում պահպանում է իր առանցքային բնութագրիչները, այն է՝ առաջադիր գաղափարի, նպատակի առկայություն, դրանց լուծման և իրագործման համար նախանշված, ծրագրված և պլանավորված գործողություններ, ստեղծարար, ինքնուրույն աշխատանքի ջանք և ներդրում, անհրաժեշտ ռեսուրսների առկայություն, համագործակցություն և այլն:

Պետական և առարկայական չափորոշիչների, ծրագրերի պահանջներին համապատասխան, շեշտը դնելով ուսուցման վերջնարդյունքի վրա՝ ինչ պետք է իմանա, ինչ պետք է կարողանա և ինչ արժենորի ու հասկանա, ինչ պիսի վերաբերմունք ունենա սովորողը, ուսուցչի խնդիրն է կազմակերպել այնպիսի ուսուցում, որի ընթացքում սովորողը ոչ թե պատրաստի գիտելիքներ ստանա, այլ դրանք որոնի և ինքնուրույնաբար ձեռք բերի, կարողանա մտածել և փնտրել, կատարել մտածված, գիտակցված և համակարգված մտային գործողություններ և դրանց գործնական իրագործման արդյունքում ձեռք բերի փորձ և փորձառություն:

Որպես նախագծային գործունեության արդյունք՝ սովորողները ձեռք կբերեն տեղեկատվական դաշտում կողմնորոշվելու, ձեռք բերված տեղեկությը, նյութերը նպատակային հաջորդականությամբ համակարգելու, տեսական նյութը հետազոտելու, դրա հետազոտման, քննական վերլուծության ընթացքում կանխատեսումներ, բացահայտումներ և եզրակացություններ անելու, ուշադիր լինելու, ստեղծարար մոտեցումներ դրսևորելու, դրանք պատճառաբանելու և հիմնավորելու նոր որակներ և դրանց կիրառման հմտություններ, կառաջանա ուսումնառական հետաքրքրվածություն:

Իր իսկ և ընկերների կողմից կատարվող դիտումները, վերլուծություններն ու մեկնաբանությունները սովորողին ոչ միայն պարզ ու հասկանալի են դարձնում կատարվող գործողությունները, այլև կազմակերպում և կարգավորում են դրանք. սովորող ձեռք է բերում ճանաչման, ինքնարացահայտման, ձեռք բերած գիտելիքը կիրառելի, գործածելի և հիմնավոր դարձնող սոցիալական կարևոր որակներ, դրանց կիրառման գործնական հմտություններ:

Ժամանակակից հանրակրթական դպրոցում նախագծային ուսուցումը պետք է կիրառել ոչ թե առարկայական ավանդական դասավանդման փոխարեն, այլ դրա հետ մեկտեղված:

### **Օգտագործված գրականության ցանկ**

1. Кильпатрик В., Основы метода, М.-Л., 1928.
2. Пинкевич А. П., Педагогика, М., 1929, т. 2.
3. Полат Е. С., Бухаркина М. Ю., Современные педагогические и информационные технологии в системе образования/ Учебное пособие, М., Издательский центр «Академия», 2007.
4. Briller V., Technoloiogy projects, 2021.
5. Իմաստունների մտքերը գիտելիքի, դաստիարակության, կրթության և մշակույթի մասին: <https://thestrip.ru/hy/lipstick/umnye-slova-ob-obuchenii-mysli-mudryh-oznaniyah-vospitanii-obrazovanii-i/> 4.03.2023,ժ.18:00
6. Հանրակրթության պետական չափորոշիչ,  
<https://www.arlis.am/documentview.aspx?docid=149788> 1.04.2023, ժ.10:20
7. <<ԿԳՄՍ, Խմբակներ և նախագծային ուսուցում. Ուժի մեջ է մտել նոր կարգ. <https://escs.am/am/news/11707> 2.05.2023, ժ.23:00

## PROJECT-BASED LEARNING IN THE PAST AND PRESENT CONTEXT

**PAPIKYAN KARINE**

*PhD in Pedagogical Sciences, Associate Professor*

*Lecturer of Gavar State University and*

*National Academy of Sciences of the RA*

*e-mail: karinepapikyan61@mail.ru*

**DISHAGHAIAN NUNE**

*Teacher of Armenian Language and Literature of*

*Yerevan basic school № 153 named after R. Ishkhanyan*

*e-mail: Nune Decshagagyan@gmail.com*

Project-based activities in modern comprehensive schools are considered one of the most effective forms of student engagement. Educational projects create favorable conditions for recognizing and developing one's own abilities, transforming acquired scientific knowledge into action. Project-based learning has always been a part of the learner's independent, investigative work, but now more specific requirements are imposed on it. Project-based learning was introduced in the 18th century in architecture schools in Europe. In the first half of the 20th century, the project method was applied by the American pedagogue, philosopher, psychologist J. Dewey. Later, the design method was applied and developed by J. Dewey's student William Heard Kilpatrick, Thomas Markham, A. P. Pinkevich, Professor Ev.S. Polat and many educators.

Project-based learning, as a form of organization of education and an expected outcomes of learning, is enshrined in the legal document "State Standard of Public Education" approved by the RA government in 2021. According to the "State standard of Public Education", project work is defined by the curriculum of general education with state and school components. In other words, project work can be carried out both in the domain of the state component (academicsubjects) and the school component (groups). Project-based learning is effective when it is used not instead of traditional subject teaching, but along with it as a building block of the educational system.

**Keywords.** *Project learning, general education, competence, knowledge, action, independent work, research work, standard, method, technology, problem, planning, result, state component, school component, professional orientation.*

## ПРОЕКТНОЕ ОБУЧЕНИЕ В ПРОШЛОМ И НАСТОЯЩЕМ КОНТЕКСТЕ

**ПАПИКЯН КАРИНЕ**

кандидат педагогических наук, доцент

Преподаватель ГГУ и НАН РА

электронная почта: [karinaperapikyan61@mail.ru](mailto:karinaperapikyan61@mail.ru)

**ДИШАГАДЖЯН НУНЕ**

учитель армянского языка и литературы

Ереванской базовой школы №153 имени Р. Ишханяна

электронная почта: [Nune Decshagagyan@gmail.com](mailto:Nune Decshagagyan@gmail.com)

Проектная деятельность в современной общеобразовательной школе является одним из наиболее эффективных видов деятельности учащихся. Образовательные проекты создают благоприятные условия для осознания и развития собственных способностей, превращают полученные научные знания в действие. Проектное обучение всегда было составной частью самостоятельной, исследовательской работы обучаемого, но сейчас к нему предъявляются более конкретные требования. Обучение на основе проектов было введено еще в 18 веке в архитектурных школах Европы. В первой половине 20 века метод проектов применил американский педагог, философ, психолог Дж. Дьюи. Позже метод проектирования был применен и развит Дж. Ученик Дьюи Уильям Хёрд Килпатрик, Томас Маркхэм, А. П. Пинкевич, профессор Э. С. Полат и многие педагоги.

Проектное обучение, как форма организации обучения и ожидаемый конечный результат обучения, закреплено в нормативно-правовом документе «Государственный стандарт народного образования», утвержденном правительством РА в 2021 году. Согласно «Государственному стандарту народного образования» проектная работа определяется учебным планом 2 общего образования с государственным и школьным компонентами. То есть проектные работы могут осуществляться как в сфере государственного компонента (учебные предметы), так и школьного компонента (группы). Проектное обучение эффективно, когда оно используется не вместо традиционного предметного обучения, а вместе с ним как структурный элемент образовательной системы.

**Ключевые слова:** проектное обучение, общеобразовательная компетенция, знание, действие, самостоятельная работа, научно-исследовательская работа, стандарт, метод, технология, проблема, планирование, результат, государственный компонент, школьный компонент, профессиональная ориентация.

Հոդվածը ներկայացվել է խմբագրական խորհուրդ 10.06.2023թ.:

Հոդվածը գրախոսվել է 18.06.2023թ.:

Ընդունվել է տպագրության 17.11.2023թ.: